

«ԿՕՇԻԿ»-Ը ՎՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏԵՐՄԻՆ

«Կօշիկ»-ը վորպես սոցիալական տերմին մեր ուշագրությունը գրավել է դեռ 1937 թվին, յերբ Լենինգրադի Պետական Երմիտաժում մեր արած մի հաղորդման ժամանակ, ի միջի այլոց, փորձեցինք բացատրել կարևոր սոցիալական յերևույթ արտահայտող այդ տերմինը։ Այս հոգվածում խորացնում է սպացուցում ենք մեր նախկին միտքը։

«Կօշիկ» բառի իմաստը ճիշտ է բացատրում պրոֆ. Դր. Ղափանցյանը։ Այն նշանակում է նվեր, պարգև, ընծա։ Պրոֆ. Հ. Աճառյանն իր Արմատական բառարանում «Կօշիկ»-ի գլխաց գնում է վարձք, վարձատրություն, համադրելով այն ռուսական «на сапожки», «на чай» արտահայտություններին։

Պրոֆ. Դր. Ղափանցյանն իր «Chetto-Armeniaca» աշխատության մեջ հայկական «կօշ» կամ «կօս» արմատը համադրում է խեթական «կօշ» կամ «կուշ» արմատին և ցույց է տալիս նրանց նույնությունը, ինչպես և խեթական «Kusan» = վճար, վարձատրություն և հայկական կօշնել և անկօսնել (անարժեք համարել, արհամարհել) բառերի նույն արմատից կազմված լինելը¹։ Իսկ վերջերս Պետական համալսարանի գիտական սեսիայում կարդացած իր դասախոսության ժամանակ «կօշ» կամ «կօս» արմատը և հայերենում նրանից կազմող անկօսնել, կօշնել և, վերջապես, կօշիկ բառերը բազմաթիվ այլ արմատաբառերի հետ միասին, իրավացիորեն համարեց հայերի եթնոգենեզիսի մեջ մասնակցած խեթական Էլիմնտի լեզվական մուծումը հայերենի մեջ։

«Կօշիկ» տերմինի բացատրության մեր փորձը, սակայն, դեռն է անցնում «կօշիկ» բառի ստուգաբանությունից, թափանցում է սոցիալական կյանքի մեջ և ձգտում է բացատրել պատմական վաղ անցյալի, այն ե՛ս հայ Արշակունի թագավորների և մարզպանության դարաշրջանի հասարակական կյանքի յերևույթներից մեկը։

Հայկական հին մատենագրության մեջ «կօշիկ» տերմինի գործածության միայն յերեք գեպք է հանդիպում², վորից յերկուսը Փավստոս Բյուզանդացու Հայոց պատմության մեջ, իսկ մեկը՝ Ասավածաշնչում։ Այս վկայությունները մեկը մյուսին լրացնում են և ճշգրտում։

¹ Гр. Капанцян—Chetto-Armeniaca, Госиздат ССРА, Эривань, 1931—1933, стр. 57 և 131—132.

² «Կօշիկ» տերմինի գործածության վիճելի մի գեպք էլ հանդիպում է Տրդատ Թագավորի թողած հուշարեն արձանագրության մեջ, վորի մասին կիսոսենք ներքևում։

Փափստոս Բյուզանդացին, ինչ-վոր Յոհան յեպիսկոպոսի վերաբերող պատմվածքում մի դիպված է նկարագրում այդ շողոքորթ, ազահ և խաբեբա յեկեղեցականի կյանքից: Ինչ-վոր ճանապարհի վրա Յոհան յեպիսկոպոսը հանդիպում է մի զինված հեծյալ պատանու, վորի գեղեցիկ, բարձրահասակ և արագավազ ձին տեսնելով՝ դեռ հեռվից ակնկառույց է լինում, զարմանում է: Ապա մոտեցող հեծյալին խաբեյությամբ իջեցնում է ձիուց և բռնությամբ նրան յերեց է ոծում, թեև ձիավորը հայտնում է, թե մանկությունից ավագակ, չարագործ, մարդասպան է յեղել և այժմ էլ նույն գործերով է պարապում: Այնուհետև, վարպես հատուցում իր արած լավության, յեպիսկոպոսը պատանուց պահանջում է ձին իրեն նվիրել:

«...Ինքն Յոհան մատուցեալ բուռն յարկանէր զձիոյն, և ասէր.

Այս ինձ կօշիկք լիցին, փոխանակ գի երէց արարի գֆեգ: Իսկ այրն համառեալ ի վերայ ձիոյն, չառնոյր յանձն տալ...»¹:

Այս վկայությունից յերևում է, վոր «կօշիկք» լավության փոխարեն տրվող նվերի նշանակությամբ է գործածված:

Բայց «կօշիկք», վորպես սոցիալական տերմինի, իմաստը բացահայտվում է Փափստոս Բյուզանդացու մյուս վկայության մեջ: Բյուզանդացին պատմում է Սուրեն անունով պարսիկի Հայաստանում մարզպան նշանակվելը, վորը Հայաստան է դալիս տաս հազար զորքով, իր հետ ընծաներ բերելով հայոց սպարապետ Մանվելին, նրա տիկնոջն ու յերեխաներին, հայ ավագ իշխաններին ու մեծամեծներին (այսինքն հայկական ազնվականության վերնախավին), վորոնք մեծ հոգաբարությամբ ընդունում են այդ պատիվները և Սուրենին հանձնում Հայաստանի կառավարումը:

«Տային զաշխարհն Հայոց ի ձեռն Սուրենայ, և հնազանդէին հրամանաց թագաւորին Պարսից. և կարգէին քաղաւորին Պարսից յաշխարհէն Հայոց հարկս՝ տալ ընծայս և պատարագս: Սոյնպէս և մարգպանին Սուրենայ հասս և կօշիկս և զպիտոյս գոռնկացն. սոյնպէս և տասն հազարացն դարման և կերակուր ըստ պիտոյիցն»:

Ինչպես յերևում է բերված տեքստից, հայ ազնվականները պարտավորվում են յենթարկվել պարսից տիրապետությանը, հարկեր ու ընծաներ, նվերներ տալ պարսից թագավորին, նույն ձևով հարկեր (հասս) և ընծաներ, նվերներ տալ մարզպան Սուրենին: Բայց նախադասության՝ Սուրենին վերաբերող մասում ընծաներին ու նվերներին փոխտրինում է «կօշիկ» բառը: Հետաքրքրականը, ինչպես յերևում է բերված տեքստից, այն է, վոր «կօշիկք» (ընծաները և նվերները) զրվում է հարկերի կողքին և նրա մասին, ինչպես և հարկերի մասին, ասվում է, թե նրանք կարգվում են, սահմանվում են, ուրեմն «կօշիկք» սոսկ կամովին տրվող ընծա կամ նվեր չէր, այլ սահմանված պարտավորություն էր, վոր կրում էին վասալները սյուզերենի կամ սուլթանի թագավորի նկատմամբ, տվյալ դեպքում՝ հայ իշխանները

¹ Փ. Բյուզանդացի — Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 399—400: (Ընդգծումը մերն է. Բ. Ա.):

² Նույն, էջ 368:

Հայաստանի մարդպանի և պարսից թագավորի նկատմամբ: Մեր կարծիքի ճշմարտացիության համար կռվան կարող ե լինել նաև այն, վոր «Կօշիկը» դրված ե հարկերի կողքին, նրանցից հետո, այլև մարդպան Սուլթանի արքունիքին ու նրա տաս հազարանոց զորքին տրվող ապրուստի միջոցներից ու այլ պետքերից առաջ: Այդ նշանակում ե, վոր «Կօշիկ» պարտավորությունը բավական մեծ և ծանր պարտավորություն եր:

Մեր յեղրակացությունն ավելի քան ճշգրտվում ե «Կօշիկ» տերմինի՝ Աստվածաշնչում հանդիպող գործածությամբ: Այստեղ պատմվում ե Իսրայելի Սաավիլ թագավորի մասին, վորն իր ծերություն հասակում դիմում ե իսրայելցիներին հետևյալ խոսքերով.

«Տուք զինէն պատասխանի առաջի տեսառն և առաջի օծելոյ նորա: Եթէ զեղն ուրուք առի կամ զէշ ուրուք վարեցի կամ յաղթահարեցի զոք ի ձեռն. կամ թէ զրկեցի ինչ զոք. Յո՞յր անոաց առի հաս կամ կօշիկս. տուք զինէն պատասխանի և հատուցից ձեզ»¹:

Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ այդ տերմինը տեղ ե գտել նույն Ծ-րգ դարում, յերբ Փաւստոսը գրել ե իր Պատմությունը: Ուրեմն յերկու դեպքում ել «Կօշիկ» տերմինը նույն նշանակությամբ ե գործածված: Բերված տեքստից յերևում ե, վոր «Կօշիկը» համարվում ե բռնություն, զրկանք և համադրվում ե ուրիշից յեղը կամ եշը խլելու, ուրիշին ճնշելու, նեղություն պատճառելու, զրկանքներ հասցնելու հետ և դրվում ե հարկից հետո, միացվելով հարկի հետ «կամ» կապով: Իսկ այդ կարող ե կողմնակի ապացույց լինել այն բանի, վոր հասարակական կյանքում ունեցած իրենց նշանակությամբ «հասը» (հարկը) և «Կօշիկը» իրար մոտ են յեղել: Բայց Աստվածաշնչում ել «Կօշիկ» ստացողը սուղերեն թագավորն ե: Ուրեմն կօշիկի պարտավորությունն կրողը վասալն եր իր սուղերենի նկատմամբ և նրա պարտավորությունը, վորը սահմանված պարտավորություն եր, նշանակում ե, յենթարկվում եր վորոշ որենքների, իսկ այդ որենքները կարող եյին հենվել սովորույթների վրա, վորոնք հնում յերբեմն որենքից ավելի զորեղ եյին:

Աստվածաշնչի հրեական բնագրում «Կօշիկ» բառի տեղ դրված ե «կաշառք» բառը²:

«Կաշառք» և «կաշառել» բառերի առաջացումը «Կօշ» արմատից լեզվաբանորեն միանգամայն հնարավոր ե: Հին հայերենում «Կօշ»-ը գրվում եր «կաշ» և «կաշառել»-ն սկզբնապես պետք ե լինել «կաշառել», վոր կնշանակեր ընծա անել, նվեր տալ, իսկ «կաշառք» կնշանակեր ընծա, նվեր, հոգնակի ձևով³, այլ խոսքով՝ մենք կուսենանք նույն «Կօշիկ» բառի սկզբնական իմաստը: Մեր այս յենթադրությունը, վորի վրա խիստ չենք պնդում, թերևս կարելի յե հիմնավորել նրանով, վոր Աստվածաշնչի հունարենից կատարած ուսերեն թարգմանության մեջ «Կօշիկ» բառի տեղ դրված ե ընծա, նվեր (дар) բառը:

¹ Աստվածաշնչի Վենետիկ, 1805, Ա. Թագ. ԺԲ, 3 (ընդգծումը մերն ե. Բ. Ա.):

² Տես Աստվածաշնչի, Կ. Պոլիս, 1895, Ա. Թագ., ԺԲ, 3, տողատակի ծանոթությունը:

³ Ի դեպ՝ Հոկտեմբերյան շրջանի բարբառներից մեկում գործածվում ե և «կաշառ» յեղակի ձևը:

Յեթե ընդունելի համարվի «կաշառք» բառի մեր տված բացատրությունը, ապա պարզ և «կաշառք» (ընծա, նվեր) իմաստի կրած փոփոխությունը: Նկատենք, վոր կաշառքը բավական տարածված յերևույթ եր Արշակունյան, մանավանդ մարդպանական Հայաստանում, յերբ կաշառում եր նաև պարսից արքունիքը վորոշ հայ իշխանների՝ սրանց իր հլու գործիքը դարձնելու համար:

«Կաշառք» տերմինը «կաշ» (կոշ) արմատից առաջացած համարելով հանդերձ, ժակայն հեռու յենք «կաշառք»-ը և «կոշիկ»-ն իրար հետ շփոթելու մտքից: Այդ յերկու տերմինները միանգամայն տարրեր յերևույթներ են արտահայտել:

«Կոշիկ» տերմինի մի վիճելի դեպք ել հանդիպում ե Տրդատ Թագավորի թողած հունարեն արձանագրության մեջ: Արձանագրությունը, վորի հրատարակողը՝ Մ. Ռաստովցևը հակամետ ե այն վերագրել Տրդատ Գ-ին, գտնվել և Ապարանում կամ նախկին Նիգ գավառում:

Ըստ արձանագրության ընթերցման յերկրորդ վարիանտի, Տրդատը Նիգ գավառը տվել ե Գնթունյաց տոհմի իշխաններից մեկին վորպես կոշիկ (ἀποδόμα): «Կոշիկ» տերմինի վերը տված բացատրության համաձայն, յեթե նկատի ունենանք այդ բառի սկզբնական իմաստը, դա կնշանակեր պարզապես, վոր Տրդատը Նիգ գավառը նվիրել ե Գնթունի իշխանին: Այս դեպքում Ապարանի հունարեն արձանագրության ընթերցման յերկրորդ վարիանտին լիովին կհամապատասխաներ արձանագրության իմաստի բացատրության առաջին վարիանտը, վոր Տրդատը Նիգ գավառը նվիրել ե Գնթունյաց իշխաններից մեկին (անունը չի պահպանվել): Իսկ բացատրության յերկրորդ վարիանտը, «վոր Գնթունիները Թագավորից ստացել են Այրարատի դոմենի մի մասը, Նիգ գավառը Թագավորի կոշկեղենի (οδύβη) հոգացողության հատուկ հանձնարարությամբ...»¹ և Մ. Ռաստովցևի՝ դրա հետ կապված յերկար ու բարեխիղճ պրպտումները, վորոնք բազմաթիվ եջեր են բռնում այդ փոքրիկ աշխատության մեջ, տվյալ հարցի լուծման տեսակետից միանգամայն ավելորդ են դառնում: Սակայն Մ. Ռաստովցևի առաջին և հիմնական բացատրությունը հաստատվում ե:

Այս դեպքում հետևում ե, վոր Ապարանի հունարեն արձանագրության մեջ «կոշիկ» (ἀποδόμα) տերմինը վասալական պարտավորության նշանակություն չունի, այլ պարզապես ընծա, նվեր ե նշանակում: Սակայն մեզ համար ավելի լավ, վորովհետև այդ դեպքում մենք կունենանք «կոշիկ» տերմինի պատմականորեն կրած փոփոխության մի պատկեր: Յեթե I դարում կամ III դարի վերջերին (Ապարանի արձանագրությունը վերագրվում ե և՛ Տրդատ Ա-ին, և՛ Տրդատ Գ-ին) «կոշիկը» պաշտոնական արձանագրության մեջ դեռ պահպանում ե իր նախնական «նվեր» կամ «ընծա» իմաստը և կարող ե վերաբերել նաև Թագավորի՝ իրեն վասալներին տված նվերներին, ապա V դարում այն, «նվեր», «ընծա» ընդհանուր իմաստի հետ, ստանում ե նաև սահմանված վասալական պարտավորության իմաստ, մի պարտավոր-

¹ М. Ростовцев—Апаранская греческая надпись царя Тиридата, Петербург / 1911 г., стр. 24.

քուլթյուն, վոր վասալները կրում էին իրենց իշխանի կամ սուզերենի հանդեպ: Հարկավ, Արշակունիների շրջանում «կօշիկ» պարտավորության վերաբերյալ կողմնակի վկայություններ կան միայն: Այսպես որինակ՝ Մ. Խորենացին, խոսելով պարթևական պետության հիմնադրի՝ Արշակ Ա-ի մասին (III դարի կեսերը մեր թ. առաջ), ասում է, թե նա դաշն է կնքում հռոմայեցիների հետ, վորպեսզի նրանք չոգնեն Մելիկյան պետությանն ընդդեմ Պարթևների և խոստանում է վճարել վոչ թե հարկ, այլ ընծաներ տալ տալիս հարյուր քանքար:

«Հրեշտակա առաքեալ խնդրէր զգաշնաւորութիւն, զի մի օգնիցէն Մակեդոնացւոց. ոչ տարով հարկս, այլ պատարագս միայն ամի ամի հարիւր քանքարաց»¹:

Սակայն այստեղ խոսքը վերաբերում է պարսից Արշակունիներին (Պարթևներին), հայ Արշակունիներից շատ առաջ, յերբ մի պետութիւն մյուս պետութիւնն է ընծա (պատարագ) տալիս, այն ել տարիներ շարունակ է սահմանված չափով: Այստեղից յերևում է, վոր «պատարագը» մտատարապես նույն իմաստն ունի, ինչ Փավստոս Բյուզանդացուց վերբերած վկայության մեջ «կօշիկը», յերբ հայերը պարտավորվում են ընծաներ (կօշիկ) տալ պարսից թագավորին: Միանգամայն հնարավոր է յենթադրել, վոր այն, ինչ գոյութիւն ունեն պարսից Արշակունիների մոտ դեռ վաղ շրջանից սկսած, կարող եր լինել և Արշակունյան Հայաստանում: Սակայն ֆեոդալական հիերարխիայի մյուս աստիճանների վասալների վասալական «կօշիկ» պարտավորության վերաբերյալ վաղ շրջանում ուղղակի վկայութիւն չկա: Կարելի չէ հանդիպել դեպքերի, յերբ ֆեոդալներն այս կամ այն առիթով նվերներ (պատարագ) են տվել թագավորին:

«Պատարագ» բառի ամենատարածական իմաստը համընկնում է «կօշիկ» բառի սկզբնական ընծա, նվեր իմաստի հետ, սակայն «կօշիկ» բառը V դարում «ընծա» կամ «նվեր» նշանակութիւնից բացի, արտահայտում եր նաև վասալների նյութական պարտավորութիւնը սյուզերենի հանդեպ:

1940 թ., 28 ապրիլի.

¹ Մ. Խորենացի—Պատմութիւն Հայոց, գիրք երկրորդ, գլ. Բ., էջ 103: